զթիւրելն նոցա զիրաւունս, ապա թէ ոչ՝ սաստել Լատինաց չմերձենալ 'ի սիւնն յայն, եւ հրապարակաւ ընթեռնուլ զգրեանս 'ի Բեթղեհէմ, զոր ետուն։ Եւ 'ի պատուիրել նոցա, Լատինք լռեցին առ ժամն, եւ ապա գնացեալ առ Քաղաքապետն աղաչէին զնա չգնալ 'ի Բեթղեհէմ եւ ոչ արգելուլ զսիւնն. այլ նորա անկարելի վարկուցեալ զիրան արձակէ զնոսա, իսկ Հայք բազմութեամբ այլազգեաց գնացին 'ի Բեթղեհէմ, կոչեցին եւ զլատինս, բայց նոքա ոչ երեւեցան 'ի միջի. և նոքա ընթերցան զգրեանս առաջի մեծի և փոքրոյ, եւ պատուիրեցին նոցա առնել ըստ հրամանին. թէպէտ նոքա հնազանդէին, այլ զոր ինչ ուսուցանէին Լատինք, զայն առնէին. զի խորհրդով Քաղաքապետին և գիտութեամբ Բդեշխին գործէին։ Եւ ապա դարձան անտի յԵրուսաղէմ։

Սակայն Լատինք յաղագս Քաղաքապետին գրեցին գիր բողոքոյ առ Դատաւորն, և առաքեցին զայն 'ի ձեռն Թարգմանին և Խոստովանահօր, որ էր 'ի նմին պահու 'ի տուն Նախիպին և Միւֆթեայ, և մատուցեալ զգիրն ասեն. եթէ էիր 'ի դատարանն, կրօնաւորք բազմութեամբ ունէին գալ առ քեզ, այլ ըստ որում հրաւիրեալ 'ի տուն այլոց, զմեզ միայն առաքեցին, ընթերցիր զսա և բարւոք 'ի միտ առ. թէպէտ Դատաւորն սաստիւ արար նոցա պատասխանի, բայց երկիւղն սակաւ առ սակաւ տիրէր սրտի նորա, և նոցա նշմարեալ՝ առաւել վիրաւորեցին զնա բանիւք և մեկնեցան։ Տանուտեարք տեսեալ զնա 'ի տխրութեան, թէպէտ եւ սփոփեցին և հանգուցին զնա անդ, բայց աննինջ եւ անհանգիստ, և 'ի ժամու աղօթից ելեալ անտի գնաց 'ի դատարան, և կոչեալ զԴիոնէսիոս վարդապետ պատմէ նմա զամենայն անցս գիշերին, եւ ցուցանէ զգիր Լատինաց, պարսաւելով զանհեթեթ բանս և զչարժմունս նոցա. եւ 'ի կարգս բանից ասէ՝ զի՞ փոյթ էր ինձ գալ յայս քաղաք եւ վասն Հայոցդ անկանիլ յորոգայթ. դուք ոչ կարէք հոգալ զամենայն պէտս իմ, որով զօրացեալ գործեցից զմեծամեծս յօգուտ ձեզ և ոչ 'ի ձեռաց Լատինաց ազատել, ուստի հարկ լինի դառնալ 'ի կողմն Լատինաց՝ զի մի վասնզեցայց։ Իսկ վարդապետն մեղմով ինն առաջի եդ նմա զհրովարտակ Արքային, զկատարումն